

**ԺԱՄ ՄԸ
ԱՄԵՆԱՍՈՒՐԲ
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՌՋԵԻ**

ՊԷՅՐՈՒՔ, 2017

Ա.

ԵՐԳ

Սէր անուն Յիսուս, սիրով քո նրմիս,
սիրտ իմ քարեղէն: Վասըն գթութեան, վասն
ողորմութեան, վերըստին կեցո՛ւ:

Տենչալի տեսլեամբ, տո՛ւր ինձ յագեմալ,
Տէր Յիսուս Քրիստոս: Բարուն երկնաւոր,
քոտեա գաշակերտս, բամից երկնայնոց:

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ...

*Ո՛վ պաշտելի Փրկիչ իմ Յիսուս, անհուն
էր սէրդ մեր հոգիներուն հանդէպ, եւ այդ
պատճառաւ հաստատեցիր Ամենասուրբ Հա-
ղորդութեան հրաշափառ խորհուրդը քու
աստուածային Մարմնոյդ եւ Արեանդ:*

*Ուզեցիր մնալ մեր մէջ մինչեւ աշխարհիս
կատարածը, ու շրջապատուիլ ոչխարներէդ
իբրեւ Հովիւ, եւ քու հպատակներէդ իբրեւ
Թագաւոր:*

*Ամենասուրբ Հաղորդութեան մէջ կը շա-
րունակես Զոհդ, որպէսզի ազատես մեզ
աստուածային արդար բարկութենէն, ու մեր*

վրայ իջեցնես օրհնութեան ու շնորհքի անձ-
րեւներ:

Հրեշտակներդ անգամ բաւական մաքուր
չեն քու առջեւդ երեւնաելու: Իսկ մենք ի՞նչ-
պէս համարձակինք նայիլ Քեզի մեր անմա-
քուր աչքերով:

Գիտակից ենք մեր մեղքերուն. ամօթա-
հար ենք մեր անարժանութեամբ: Ուստի
եկած ենք խոնարհ սրտով՝ բերելու Քեզի մեր
զղջումն ու սիրոյ կարօտը:

Քրիստոս Աստուած մեր, եւ Յիսուս
Փրկիչ սիրելի, ներում կը խնդրենք զղալից
սրտով մեր բոլոր, բայց մանաւանդ ա՛յն
մեղքերուն համար, զորս գործած ենք Ամենա-
սուրբ Խորհուրդիդ դէմ:

Ներէ՛ մեզի, զի եղած ենք անտարբեր
Քեզի հանդէպ: Ներէ՛ մեզի, զի եղած ենք
անհոգ Քեզ այցելելու: Ներէ՛ մեզի, զի ընդու-
նած ենք Քեզ ա՛յնքան ցանցառ, ա՛յնքան
ցրտութեամբ, եւ աւաղ՝ ա՛յնքան անարժա-
նութեամբ:

Դառնաղի արցունքով կ'ողբանք մեղքերը
մեր եղբայրներուն, ի մասնաւորի մեղքերը
դժբախտ հերետիկոսներու, որոնք կ'ուրանան
քու ներկայութիւնդ Ամենասուրբ Հաղորդու-
թեան մէջ:

Մեր անկեղծ եւ բուռն փափաքն է պաշտել ու սիրել Քեզ ամէնուն փոխարէն:

Ընդունէ՛, բազմագուլթ Փրկիչ, մեր խորին հաւատքը իբրեւ հատուցում անոնց անհաւատութեան:

Ընդունէ՛, բարեգուլթ Յիսուս, մեր եռանդագին սէրը իբրեւ հատուցում անոնց ցրտութեան եւ անտարբերութեան: Ամէն:

Բ.

ԵՐԳ

Եղի՛ր, Յիսուս, ինձ գով աղբիւր,
Թող սրբբըւին մեղքերս բիւր
Հոգիս շնորհփովդ վերականգնի
Ժրպտի նորէն երկինքն ինձի:

Եղի՛ր, Յիսուս, ինձ նոխ սեղան
Խըմցո՛ւր արիւնդ արքայական
Աստուածային մարմինըդ տո՛ւր
Հիւծած հոգւոյս դեղ, կերակուր:

Տէր մեր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոս,
Ամենասուրբ Հաղորդութեան մէջ ուզեցիր
ըլլալ կեդրոն միութեան:

Քու սուրբ կամքդ է, որ սերտիւ միացած
ըլլանք Քեզի եւ Քեզմով՝ իրարու իբրեւ եղ-
բայրներդ ու քոյրերդ, իբրեւ զաւակներ Երկ-
նաւոր Հօրդ:

Ամենասուրբ Խորհուրդը Գոհութեան՝
յանձնած ես քու Եկեղեցւոյդ կաթողիկէ,
որպէսզի իբրեւ Մայր՝ մեզ ամէնքս սնուցանէ
քու աստուածային Մարմնովդ եւ Արիւնովդ,
եւ իրականացնէ միութիւնը հաւատքի եւ սի-
րոյ:

Կը պաղատինք, Տէ՛ր, տո՛ւր մեզի շնորհքի
լոյսը, որպէսզի օրէ օր աւելի լաւ ճանչնանք
արժէքը կաթողիկէ Միութեան, որուն մէջ
դրած ես մեզ առանց մեր արժանիքին:

Փարատէ՛ մեզմէ, Տէ՛ր, մոլորութիւններ
ու ստուերն անգամ:

Անհետացուր մեր մէջէն հերձուածի ու
բաժանումի ամենադոյզն սերմերը:

Բե՛ր, մօտեցո՛ւր ու միացո՛ւր քո՛ւ Եկե-
ղեցւոյդ՝ մեր այն եղբայրներն ու քոյրերը,
որոնք հեռու կ'ապրին Քեզմէ ու Կաթողիկէ
Եկեղեցիէդ խղճալի տգիտութեամբ ու նախա-
պաշարումով:

Ո՛ր մագնէսդ հոգիներու, տո՛ւր որ բոլոր
հաւատացեալները, ու մասնաւորապէս մեր
թեմին անդամները, կազմեն կուռ ու սերտ
միութիւն՝ դաւանելով Կաթողիկէ Հաւատքը
եւ հպատակելով երկրի վրայ քու փոխանոր-
դիդ՝ Սրբազան Քահանայապետին:

Ամենասուրբ Հաղորդութիւնդ ըլլայ
նշան սիրոյ եւ պատճառ հոգիներու միու-
թեան:

Օրհնութի՛ւն եւ գովութի՛ւն միշտ եւ
հանապազ Ամենասուրբ Հաղորդութեան Սի-
րոյ Խորհուրդիդ: Ամէն:

Գ.

ԵՐԳ

Յիսուս, Յիսուս, խոնարհ եւ հեզ
Սիրտըս ըրէ՛ Սուրբ Արքտիդ պէս
Հնագանդ, խոնարհ, քաղցրըս եւ հեզ:

Յիսուս, Յիսուս, խոնարհ եւ հեզ
Սիրտըս ի սպառ դի՛ր Արքտիդ քով
Սիրտըս այրէ Արքտիդ հրով:

Ո՛վ աստուածային Սիրտ Յիսուսի, առ-
ջեւդ խոնարհած՝ կ'ուզենք հատուցում ընել
քեզի այն անարգանքներուն համար, զորս Սի-
րոյ Խորհուրդիդ կը պատճառեն չարամիտ
մարդիկ եւ անարժան հաւատացեալներ:

Անհաւատները չեն ճանչնար Քեզ: Մենք
կ'ուզենք ճանչնալ մի՛ այն Քեզ ու ուրիշ ամէն
բան՝ Քեզմով:

Մոլորեալներ չեն պաշտեր Քեզ Ամենա-
սուրբ Հաղորդութեան մէջ: Բայց ահա՛, Տէ՛ր,
մեր պաշտամունքը սիրոյ եւ գոհութեան:

Վատեր ու գաղջեր կ'ամչնան դաւանելու
քու սուրբ ներկայութիւնդ այս Ամենասուրբ
Խորհուրդին մէջ:

Մենք կը նուիրենք Քեզի մեր անսասան
դաւանութիւնը:

Գիտենք ու կը խոստովանինք, որ մենք ալ
պարտապան ենք, որովհետեւ չենք հետեւած
քու Սուրբ Սրտիդ թելադրանքներուն:

Ա՛յդ պատճառաւ բոլորած ենք Քեզ այս-
օր: Լալ կ'ուզենք ու հեծել նաեւ մե՛ր վրայ:
Մեր հաւատքին պակսեցաւ սէրը: Մեր սէրէն
բացակայ եղան բարի գործերը:

Ներէ՛, Տէ՛ր, մեր անհաւատարմութեան,
գաղջութեան ու մեր ապերախտութեան:

Յիշէ՛, Տէ՛ր քաղցրագուլթ, որ մեզի համար աշխարհ եկար ու մեր բնութիւնը առիր: Մեզի՛ համար թափեցիր Սուրբ Արիւնդ:

Մեղաւոնե՛ր փնտռելու համար իջար երկինքէն: Ահա մե՛նք: Ներէ՛ մեզի ու փոխէ՛ մեր սրտերը: Կ՛ուզենք քե՛զ սիրել ա՛յնպէս, ինչպէս դո՛ւն արժանի ես սիրուելու: Ամէն:

Դ.

ԵՐԳ

Անձն իմ ահա ծարաւի
Աղբիւրիդ գովարար,
Ո՛վ Փրկիչ իմ սիրելի
Կը դիմէ խանդավառ:

ԿՐԿ. Ո՛վ երջանիկ հրեշտակներ
Տըւէ՛ք ինձ ձեր վառ սէր,
Ձեր պաշտաման առարկայ
Աստուածն այն ինձ կու գայ (*ԿՐԿ*):

Տապանակին մէջ ի սպառ
Կենարար իմ Յիսուս
Կը սպասես դու ինձ համար
Տալով ինձ խըրախոյս:

ՆՈՒԻՐՈՒՄ

Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, փրկիչ մարդկային ցեղին, գթալիր ակնարկ մը դարձուր մեր վրայ, որ խոնարհաբար ինկած ենք Քուսեղանիդ ոտքը:

Քո՛ւկդ ենք մենք, ու կ'ուզենք մնալ քուկդ: Որպէսզի աւելի սերտօրէն միանանք Քեզի, մեզմէ ամէն մէկը սիրայօժարութեամբ կը նուիրէ ինքզինքը Քու Ամենասուրբ Սրտիդ:

Շատերը բնաւ ճանչցած չեն Քեզ: Շատերն ալ ուրացած են Քեզ եւ արհամարած՝ պատուիրաններդ: Գթա՛, ողորմէ՛ անոնց ու մեզի բոլորիս, ո՛վ քաղցրագուծ Յիսուս: Քաշէ՛ բոլոր մարդիկը դէպի քու աստուածային Սիրտդ:

Իշխէ՛ ու թագաւորէ՛, Տէ՛ր, ո՛չ միայն հաւատարիմ՝ այլ նաեւ անառակ որդիներուդ վրայ: Տո՛ւր որ փութով վերադառնան հայրենի տունը, ու չկորսուին թշուառութեան մէջ սովամահ:

Թագաւորէ՛ անոնց վրայ, որոնք խաբւելով հեռացած են ու բաժնուած քու Սուրբ Եկեղեցիէդ: Առաջնորդէ՛ դէպի նաւահանգիստը ճշմարտութեան, որպէսզի հետեւին մէկ Հովիւի ու կազմեն մէկ հօտ:

Թագաւորէ՛, Տէ՛ր, հեթանոսներուն վրայ:
Գթա՛ ու ազատէ՛ զանոնք մահաստուներ խա-
ւարէն: Եղիր նաեւ անո՛նց Արեգակ Արդարու-
թեան: Անո՛նց ալ բացուի դուռը ողորմու-
թեան եւ Արքայութեան:

Շնորհէ՛, Տէ՛ր, Կաթողիկէ Եկեղեցւոյդ
անդորրութիւն, ազատութիւն եւ առատ
հունձք՝ Սուրբ Արիւնովդ փրկուած հոգիներ-
րու:

Տո՛ւր, Տէ՛ր, բոլոր ազգերուն՝ խաղաղու-
թիւն, ընկերային արդարութիւն ու սէր, որ-
պէսզի աշխարհի մէկ ծայրէն մինչեւ միւսը
հնչէ սա օրհներգը. գովութի՛ւն եւ գոհութի՛ւն
Աստուածային Ամենասուրբ Սրտին Յիսուսի,
որուն կը պարտինք մեր փրկութիւնը: Ամէն:

Ե.

ԵՐԳ

Ո՛վ քաղցրագուծ Սիրտ Յիսուսի
Զրդջմամբ սրբտի եւ դառնագին
Կը խոնարհի առջեւդ հոգիս
Դարձո՛ւր նայուածքդ կաթոգին:

Ինչո՞ւ համար քու փրկարար
Աստուածային օրէնքներուդ
Քաղցրութենէն հոգիս ի սպառ
Զուրկ մնայ այսպէս հեռի եւ ցուրտ:

ՄԵՐ ԱԶԳԻՆ ՀԱՄԱՐ

Ո՛վ Աստուածային Սիրտ Յիսուսի, կ'ուզենք Քեզի նուիրել մեր Ազգը:

Հայ ազգը շատ հինէն ճանչցած ու սիրած է Քեզ , փառաւորած է Քեզ քրիստոնէսավայել կեանքով ու հոյակերտ տաճարներով, ու պաշտպանած է Սուրբ Կրօնքդ իր արիւնով:

Անհուն գթութեամբդ ա՛յնպէս տնօրինեցիր, որ շատ մը մեծ ազգերէ առաջ՝ Հայ ազգին հեթանոսական խաւարը փարատեցաւ Աւետարանիդ լոյսով:

Շրջապատուած քեզի թշնամի ցեղերէ, Հայ ազգը չարչարուած, հալածուած է, որովհետեւ յանձն չէ առած ուրանայ Քեզ, հեռանալ քու Եկեղեցիէդ:

Մարտիրոսներուդ մէջ բիւրաւորներ կան նաեւ մեր ազգէն:

Աւա՛ղ, սակայն, որքա՛ն փոխուած է
մարտիրոսներու սերունդը:

Նոր հեթանոսութեան մը խաւարը կը
թանճրանայ մեր մէջ:

Քեզի համար նահատակողներուն սե-
րունդը կ'ուրանա՛յ, կ'անպատուէ՛ ու կը մոռ-
նա՛յ Քեզ:

Բայց Դո՛ւն, Տէ՛ր, մի՛ մոռնար մեր նախ-
նիքներուն հաւատքն ու սէրը, ու անոնց սի-
րոյն համար՝ մի՛ մոռնար, մի լքեր, մի՛ մերժեր
մեզ:

Դուն կրնաս վերստին յարուցանել մեր
Ազգին մէջէն դիւցազներ հաւատքի ու սիրոյ:

Վերստին թագաւորէ՛ մեր սրտերուն
վրայ: Տո՛ւր մեզի հայրեր ու մայրեր՝ որ
փայլին ընտանեկան հաւատարմութեամբ ու
սրբութեամբ:

Տո՛ւր մեզի մանկամարդ օրիորդներ ու
կտրիճ երիտասարդներ, որոնց պարծանք ըլ-
լայ գեղեցկութիւնը առաքինութեան եւ ո՛յժը
բարոյականութեան:

Տո՛ւր մեզի մանուկներ, որոնք ուրախու-
թիւնն ու պսակը ըլլան Եկեղեցւոյդ եւ Ազգին:

Եւ տո՛ւր ամբողջ ազգին՝ շնորհք գղջումի
եւ վերադարձի:

*Ձայս կը խնդրենք բարեխօսութեամբ քու
Մօրդ, Տիրամօր Կուսին: Ամէն:*

2.

ԵՐԳ

Յօղ արեան քո Տէր, ցօղեա ի հոգիս,
ցընծասցէ անձն իմ, Իիւծեալըս մեղօք, իւծեալ
աղաչեմ, իւսեա յիս բարիս:

Փըրկիչ բոլորից, փութա՛ գիս փըրկել,
փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց,
քաւեա՛ գօրհնաբանս, քեզ երգել ըզփառս:

*Ո՛վ քաղցրագուծ Սիրտ Յիսուսի, թոյլ
տո՛ւր այժմ, որ աղօթենք նաեւ մեզմէ ամէն
մէկուն համար: Չէ՛նք խնդրեր հարստութիւն
փուճ, վայելք սնոտի, եւ ոչ ալ փառք անցա-
ւոր:*

*Կը խնդրենք նախ՝ որ օրհնես մեր գոր-
ծերը, որպէս զի արդար վաստակով ապրինք
երկրի վրայ:*

*Բայց մեր սրտերը կը ձգտին երկրէ վեր,
տեւական, անանց գանձի:*

Դու ի՛նքդ ես այս Գանձը որուն կը ձգտինք: Բորբոքէ՛ մեզ այն սիրոյ կրակով, զոր աշխարհ բերիր՝ սառած սրտերը ջերմացնելու համար:

Տո՛ւր մեզի խոնարհութիւն: Չմոռնանք, երբեք՝ որ ոչինչ ենք, եւ թէ մենք զմեզ ու ամէն բան կը պարտինք Քեզի:

Զօրացո՛ւր մեզ եսամոլութեան, նախանձի, չարաշահութեան ու մեր բոլոր յուր ունակութիւններուն դէմ, որոնք կրնան բաժնել մեզ Քեզմէ:

Կամքով ձուլուած քու սուրբ կամքիդ հետ՝ ապրինք ու մեռնինք Աստուծոյ փառքին համար:

Աքսորական ենք. դէպի երկնաւոր հայրենիքը ուղղէ մեր աչքերը:

Դո՛ւն եղիր մեր վարձքը յաւիտենական կեանքի մէջ: Ամէն:

(Հոս կը յաջորդէ քարոզ մը ըստ կամի)

ՊԱՂԱՏԱՆՔ

առ

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՍԻՐՏՆ ՅԻՍՈՒՄԻ

Տէր, ողորմեա:

Քրիստոս, ողորմեա:

Յիսուս, լուր մեզ,

Քրիստոս, անսա մեզ:

Հայր երկնաւոր Աստուած. ողորմեա մեզ:

Որդիդ փրկիչ աշխարհի Աստուած.

ողորմեա մեզ:

Հոգիդ սուրբ Աստուած.

ողորմեա մեզ:

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, Որդւոյ Հօրն յաւիտենականի.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, կազմեալ ի Հոգւոյն Սրբոյ
յարգանդի Կուսին Մարիամու.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, գոյացապէս միացեալ ընդ
Բանին Աստուծոյ.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, անբաւ Մեծ վայելչութեան.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, Սուրբ Տաճար Աստուծոյ.

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, Տապանակ Բարձրելոյն.

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, Տուն Աստուծոյ եւ Դուռն
երկնից.*

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, բորբոքեալ հնոց սիրոյ.

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, ընդունարան արդարութեան
եւ սիրոյ.*

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, լի բարութեամբ եւ սիրով.

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, անդունդ ամենայն առաքի-
նութեանց.*

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, գերարժանի ամենայն գոհու-
թեան.*

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, թագաւոր եւ կեդրոն ամե-
նայն սրտից.*

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, յորում են ամենայն գանձք
իմաստութեան եւ գիտութեան.*

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, յորում բնակի ամենայն լրու-
թիւն Աստուածութեան.*

ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, ընդ որ Հայր հաճեցաւ.

ողորմեա մեզ:

*Սիրտ Յիսուսի, յորոյ մեք ամենեքին առաք ի
լրութենէ անտի.*

ողորմեա մեզ:

- Սիրտ Յիսուսի, անձկալիղ բլրոց յաւիտենա-
կանաց. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, երկնայնամիտ եւ բազում-
ողորմ. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, բաւական յամենեսին որք
կարդան առ Քեզ. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, աղբիւր կենաց եւ սրբութեան.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, քաւութիւն մեղաց մերոց.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, լցեալ նախատանօք.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, փշրեալ վասն մերոց անօրէ-
նութեանց. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, լեալ հնազանդ մահու չափ.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, ի խոր խոցեալ տիգաւ.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, աղբիւր ամենայն մխիթարու-
թեան. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, կեանք մեր եւ յարութիւն.
ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, խաղաղութիւն մեր եւ հաշ-
տութիւն. ողորմեա մեզ:
- Սիրտ Յիսուսի, զոհ մեղաւորաց.
ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, փրկութիւնն ի Քեզ յուսացելոց.
ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, յոյս ի քեզ ննջեցելոց.
ողորմեա մեզ:

Սիրտ Յիսուսի, բերկրութիւնն ամենայն սրբոց.
ողորմեա մեզ:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի.
Խնամեա ի մեզ, Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի.
Անսա մեզ, Տէր:

Գառն Աստուծոյ, որ բառնաս զմեղս աշխարհի.
Ողորմեա մեզ:

Յիսուս հեզ եւ խոնարհ սրտիւ.

Արա զսիրտ մեր ըստ Սրտին քում:

ԱՂՕԹՔ

Ամենակարո՛ղ եւ յաւիտենակա՛ն Աստուած, նայէ՛ քու սիրելի Որդիիդ սրտին եւ այն գոհութիւններուն ու հատուցումներուն՝ զորս ան մատոյց քեզի, մեղաւորներուն անունով: Դուն՝ հաշտեցնելով անոնք որ քու ողորմութիւնդ կը հայցեն, թողութիւն շնորհէ՛ անոնց, շնորհիւ քու Որդիիդ, Յիսուս Քրիստոսի, որ կ'ապրի ու կը թագաւորէ քեզի եւ Սուրբ Հոգիիդ հետ՝ յաւիտենապէս. Ամէն:

(Ամենասուրբ Հաղորդութեամբ օրհնութիւն)

Օրհնութիւն Ս. Հաղորդութեամբ

ՀԱՅՍ ԱՅՍ

Հացս այս՝ Մարմին է Քրիստոսի
Բաժակս՝ Արիւն նորոյ Ուխտի.
Ծածկեալ Խորհուրդըն մեծ յայտնի
Աստուած ի սմա մեզ տեսանի:

Սա է Քրիստոս Բանն Աստուած
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի,
Եւ աստ ի մեզ պատարագի
Բառնայ ըզմեղըս աշխարհի:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ

Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ.
օրհնեա՛լ եկեալն՝ անուամբ Տեառն:

ՅԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Յաստուածային կայծակունսն, ի Սրով-
բէից Անհրպելին, անմաքրապէս մերձեցաք,
գոլ պարտապան քում Խորհրդոյն. շնորհեա՛
լ զնոյն մաքրութեամբ ի թողութիւն մեղաց
մերոց:


Որ վառեցար ի յարփւոյն եւ ոչ կիզար
ըստ մորենոյն, այլ ետուր զՀացըն կենաց
կերակուր բանաւորաց. բարեխօսեա՛ առ
Քրիստոս ջնջել ըզգիր մեղաց մերոց:

ԹԱԳԱԻՈՐՆ

(Քառասնորդաց)

Թագաւորն արարածոց զՀացըն կենաց
ես քաղցելոց եւ զբաժակն ուրախարար որք
յԱղամայ տրրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ
Արեան, փոխան հընոյ Ուխտին արեանց, զոր
յիշատակ իմ առնիցէք մինչեւ եկից ես միւս-
անգամ:





**Հրատարակութիւն՝
Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան**